ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2017 թվականի N 53-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի մի խումբ բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Արսեն Գրիգորյանին 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ, Գոհար Սարուխանյանին 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, Գևորգի Արրահամյանին 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, Նոնա Հարությունյանին 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ և Ծովինար Եղիազարյանին 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի մարտի 28
ք. Հրազդան

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզպետի
2017 թվականի մարտի 28-ի N 53 Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Արսեն Գրիգորյան	ք. Հրազդան, Ռաֆֆու փողոց, 42 բնակարան	20 000	
2	Գոհար Սարուխանյան	ք. Հրազդան, Չարենցի փողոց, 16 բնակարան	15 000	
3	Գեորգի Աբրահամյան	ք. Հրազդան, Կենտրոն, 69 շենք, 13 բնակարան	15 000	
4	Նոնա Հարությունյան	ք. Հրազդան, Միկրոշրջան, 30 շենք, 3 բնակարան	50 000	
5	Ծովինար Եղիազարյան	ք. Հրազդան, Վանատուր, 138 բնակարան	50 000	